Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-25/09 **ծածկագրով Արարատ համայնքի բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգի կառուցման և վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված Բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Ք. Արարատ 30.04.2025թ.
ժ. 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Քենդրջյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Նունե Կարապետյան (ԳԱ)
Արտակ Զաքարյան (ԳԱ)
Արմեն Մարտիրոսյան (ԲԱ)
Հակոբ Սեդրակյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան (ՄՀՄ)

1. Բաց մրցույթի ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հայտերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Վիգիշինա» ՍՊԸ-ն, «Կառույց» Ա/Կ-ն, «Թիամատ» ՍՊԸ-ն և «Ստարտ Քոնստրուքտ» ՍՊԸ, «Եվրոբուդ Պլյուս» ՍՊԸ և «Դը Բեստ Շին» ՍՊԸ կոնսորցիումը օրենքով սահմանված ժամկետում շտկել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակից ճանաչելու մասին

2.1. Ընդունել ի գիտություն, որ «Նար Շին Գրուպ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիումը ներկայացրել է գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել մասնակցի որակավորման գնահատման «Նար Շին Գրուպ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում՝ բավարար:

2.2 Հիմք ընդունելով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը՝ հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Նար Շին Գրուպ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5. դեմ – **0**:

3. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

3.1. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

բ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

գ) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ծանուցել անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ **0**:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

4.1. ՀՀ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-25/09 ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, հասցեն՝ ք. Արարատ, Շահումյան 34:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձ. Նախագահ (ԳԱՊ)՝ _____ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ (ԳԱ) _____ Ն.Կարապետյան

(ԳԱ) _____ Ա.Զաքարյան

(ԲԱ) _____ Ա. Մարտիրոսյան

(ԲԱ) _____ Հ.Սեդրակյան

Քարտուղար (ՄՀՄ)՝ _____ Կ. Մելքոնյան